ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» սեպտեմբերի 2012թ. N_____ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ա. ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.38 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ (ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ) ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 14.12.2011թ. հ.2829369 վկայական) Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքի կցակառույցը նվիրել Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հ.11 բնակարանի (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 06.12.2005թ. հ.2100913 վկայական) սեփականատերեր Օֆելյա Թերզյանին, Նազիկ Թերզյանին և Արման Թերզյանին՝ իրենց կողմից օգտագործվող մակերեսին համապատասխան, որը ենթակա է ճշտման չափագրման որակավորում ունեցող անձի կողմից։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ա.ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.38 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ (ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ) ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ա.Տիգրանյան փողոցի հ.38 շենքի հ.11 բնակարանի բնակիչ Օֆելյա Թերզյանը դիմել է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան՝ իր ընտանիքի կողմից օգտագործվող կցակառույցը օտարելու խնդրանքով:

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ա.Տիգրանյան փողոցի հ.38 շենքին կից՝ «Տաթև ԿՔՏ» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է կցակառույցի շինարարություն՝ շենքի սեփականատերերի միջոցների հաշվին: Երևանի քաղաքապետի 2007թ. նոյեմբերի 29-ի հ.5184-Ա որոշմամբ թողարկվել է նշված հասցեում գտնվող կցակառույցի զբաղեցրած հողամասի հ.7688-2007 գլխավոր հատակագիծը և կցակառույցի նկատմամբ կատարվել է իրավունքի պետական գրանցում:

Ա.Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը (կցակառույցը) հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 14.12.2011թ. հ.2829369 վկայականը):

Երևան քաղաքի ավագանու 2011թվականի հունիսի 24-ի հ.252-Ա, 2011 թվականի հուլիսի 19-ի հ.274-Ա և 2011 թվականի նոյեմբերի 23-ի հ.331-Ա որոշումներով ավագանին թույլատրել է համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի մասնաշենքի կցակառույցները նվիրել շենքի թվով 24 ընտանիքներին:

Նկատի ունենալով, որ նշված հասցեի կցակառույցն իրականացվել է Թերզյանների ընտանիքի միջոցներով և ներկայումս այն փաստացի օգտագործում ու տիրապետում է նրանց կողմից, հարցի կարգավորման նպատակով նախապատրաստվել է «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ա.Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը (կցակառույցը) նվիրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ա.ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.38 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ (ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ) ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը (կցակառույցը) նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ա.ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.38 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ (ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ) ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ա.Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը (կցակառույցը) նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ